ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Գեղամ Ասատրյան
Ավետիս Գրիգորյան

ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.)

Հիմնաբառեր. *Մաքրավանք, XII-XIV դդ. խաչքարեր, պատկերագրություն, խաչքարագործության դպրոցներ, պեղումներ, նորահայտ ստեղծագործություններ:*

ՄՈՒՏՔ

Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում գտնվող Մաքրավանքի համալիրի տարածքում կան տարբեր դարերի բազմաթիվ խաչքարեր: Դատելով պատկերագրական և ոճական բազմազանությունից, հորինվածքային առանձնահատկություններից ու տեխնիկական մշակումներից՝ դրանք ընդգրկում են խաչքարային մշակույթի ողջ շրջափուլը՝ IX-XVII դարերը:

Մաքրավանքի խաչքարերի մի մասին արդեն անդրադարձել ենք նախկինում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է վաղ շրջանի՝ IX-XI դդ. խաչքարերին[1]:

Սույն հետազոտության գլխավոր նպատակը խաչքարային արվեստի ծաղկման շրջանի՝ XII-XIV դդ. խաչքարերի ձևավորման շրջանի լուսաբանումն է, երբ դրանց հորինվածքային առանձնահատկությունները դառնում են վառ արտահայտված: Մաքրավանքում կան նմանօրինակ տասնյակ նմուշներ, ինչի մասին վկայում են ոչ միայն նշված ժամանակաշրջանին բնորոշ հորինվածքային լուծումներն ու պատկերագրական-բովանդակային և ճարտարապետական բազմազանությունը, այլև մի մասի դեպքում՝ խաչքարերի թվակիր արձանագրությունները:

ԽԱՉՔԱՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ XII-XIV ԴԴ.

Ձևերի ոչ տեսանելի բազմազանությունը բավականին բարդացնում է խաչքարային արվեստի զարգացման վաղ շրջանին՝ IX-XI դդ. նվիրված յուրաքանչյուր հետազոտություն: Ոչ թվակիր խաչքարերի ուսումնասիրության դեպքում դրանց ոճական և հորինվածքային տարբերակումները բավականին բարդ է ներկայացնելը, ինչը վաղ շրջանի (IX-XI դդ.) խաչքարերը ուսումնասիրելիս հաճախ առաջ է բերում դրանց թվագրման հավանական շփոթ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ զարգացման վաղ շրջանում՝ IX-XI դդ., և ավարտական փուլում՝ XIV-XVII դդ., խաչքարերի ճարտարապետական ձևերը և գեղարվեստական հորինվածքները ամենուր գրեթե միանման են[2]: Այլ է իրավիճակը XII-XIV դդ.: Մի կողմից արձանագիր աշխատանքների թվաքանակի համեմատաբար մեծացումը, մյուս կողմից՝ խաչքարագործ վարպետների՝ երբեմն կատարելության աստիճանի հասնող քանդակագործական աշխատանքը խաչքարերի վրա, դրանցից յուրաքանչյուրի հստակ ընդգծված առանձնահատկությունները և տարբերությունները ոչ միայն նախորդող և հաջորդող դարերի խաչքարերից, այլև իրարից, թույլ են տալիս խոսելու այն բազմազանության մասին, որ առաջ է գալիս նշված ժամանակահատվածում: XII-XIV դդ. ողջ խաչքարային մշակույթում նկատելի են նոր շեշտադրումներ: Բացի խաչից՝ վարպետները սկսում են մանրամասնությամբ հարդարել նաև եզրագոտիները, քիվը, իսկ վարդյակն ու արմավազարդերը առավել կայուն տեղ են սկսում զբաղեցնել հորինվածքում: Հենց այս շրջանում է, որ լայն տարածում են ստանում պատկերաքանդակները, իսկ կենտրոնական խաչին

* *Հոդվածը ներկայացվել է 15.05.2020 թ., գրախոսվել՝ 21.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] *Տե՛ս Ասատրյան Գ., 9-11-րդ դդ. խաչքարերը Մաքրավանքում, «ՎԷՄ» համահայկական հանդես, №2 (62), ապրիլ-հունիս, 2018, էջ 155-164: Գրիգորյան Ա., Ասատրյան Գ., Մաքրավանքի նորահայտ խաչքարերը (Թ.-ԺԱ. դարեր), «Բանբեր մատենադարանի», 2020 թ., (հոդվածը գտնվում է հրատարակման ընթացքում):*

[2] *Տե՛ս Варданесова Т., Культура Хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв., Е., 2016, с. 155.*

զուգահեռ հորինվածքի տարբեր մասերում տեղադրվում են ավելի փոքր խաչաքանդակներ[1]: Խաչքարային մշակույթին մի ստվարածավալ ուսումնասիրություն նվիրած հետազոտող Հ. Պետրոսյանը նշում է, որ այս ժամանակաշրջանի ամենամեծ նվաճումը խաչքարի բազմագործառնությունը և անհատականացումն էր, որը խթանեց արվեստի անկրկնելի օրինակների մի ընդարձակ շարքի ստեղծումն ընդհուպ մինչև XIV դ. երկրորդ քառորդը[2]:

Համընդհանուր զարգացումը չի շրջանցել նաև Մաքրավանքը: Խաչքարային արվեստի ծաղկման շրջանը Մաքրավանքում համընկնում է գլխավոր եկեղեցու կառուցման ժամանակահատվածին. գլխավոր եկեղեցու կառուցման մասին վիմագիրն արձանագրված է հարավային ավանդատան մուտքի վերևում և պատմում է այն մասին, որ Սնպատ (իմա՛ Սմբատ) իր կնոջ և երկու որդիների հետ միասին 1211 թ. կառուցել է եկեղեցին[3]: Մաքրավանքում շինարարական և խաչքարակերտման զարթոնքը XIII դարասկզբին ուներ նաև տարածաշրջանային-քաղաքական պատճառներ և պայմանավորված էր Զաքարյանների ազատագրական պատերազմի հաջողություններով, սելջուկյան արշավանքների հետևանքով առաջացած քաղաքական, տնտեսական և մշակութային ճգնաժամի հաղթահարմամբ: Իսկ մինչ այդ՝ հատկապես XII դ. առաջին կեսում, ստեղծվում են սակավ օրինակներ, որոնց մեծ մասը ավելի շատ հիշեցնում են խաչքարային հորինվածքի զարգացման նախնական օրինակները[4]:

ՄԱՔՐԱՎԱՆՔԻ XII-XIV ԴԴ. ԽԱՉՔԱՐԵՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաքրավանքի XII-XIV դդ. խաչքարերի շարքում ուշագրավ են հատկապես մի քանի թվակիրները, որոնք իրենց պատկերագրական և հորինվածքային լուծումներով լիովին կրում են դարաշրջանի մտածողության կնիքը: Դրանցից մեկը գլխավոր եկեղեցու մուտքի մոտ գտնվող[5] 1221 թ. խաչքարն է (նկ. 1): Նախ, ինչպես առավել բնորոշ է խնդրո առարկա ժամանակահատվածի խաչքարերին, այս դեպքում ևս գործ ունենք համեմատաբար խոշոր չափերի աշխատանքի հետ՝ 87x194 սմ, ինչն առավել տարածված է ստորև ներկայացվող և XIII դ. 20-ականների վերջից ընդհուպ 50-ականների վերջը թվագրվող խաչքարերի դեպքում: Այս խաչքարի վերին հատվածն աչքի է ընկնում լայն քիվով, իսկ ստորին հատվածը՝ մեծ և խաչքարի կառուցվածքում ուրույն տեղ զբաղեցնող վարդյակով, ինչը ևս առավել ակնառու է վանքի համաժամանակյան մյուս ստեղծագործություններում: Անմշակ ետնախորշով խորանում՝ խաչի վերին թևի կողքերին, միայն թվականը նշող հակիրճ արձանագրությունն է:

Հորինվածքային և կառուցվածքային առումներով նախորդ խաչքարին բավականին նման մեկ ուրիշը կանգնած է համալիրի արևելյան կողմի խաչքարաշարքում (նկ. 2): Խաչքարագործ վարպետների ձեռագրերի նմանությունը ակնհայտ է երկու աշխատանքներում: Չափերը գրեթե համընկնում են՝ 93x202 սմ: Այս խաչքարը ևս պահպանում է արդեն դասական դարձած կառուցվածքային ոճը՝ վարդյակ, ծագող արմավազարդեր, խորան, քիվ: Երկու խաչքարերի դեպքում էլ նույնն է նաև խաչի թևերի ավարտը:

Այս խմբի խաչքարերի ոճական հանգուցալուծումը տեսնում ենք համալիրի միանավ եկեղեցու դիմաց կանգնեցված խաչքարի օրինակով (նկ. 3): Ինչպես նախորդ ստեղծագործությունը, սա ևս թվագրություն չունի, սակայն նրա պես պահպանում է ոճական ու հորինվածքային կրկնությունները և խաչքարագործ վարպետների ձեռագրերի նմանությունները վերը քննարկված 1221 թ. խաչքարի հետ: Խաչքարի չափերը կրկին գրեթե նույնն են նախորդ երկուսի հետ՝

---

[1] *Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար, Ե., 2015, էջ 22:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 23:*

[3] *Արձանագրության վերծանության վերաբերյալ օգտակար քննարկումների համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում վիմագրագետ Գագիկ Սարգսյանին:*

[4] *Հմմտ. Առաքելյան Բ. և այլք, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսից մինչև XIV դ. կեսերը), «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Ե., 1976, էջ 529-540; Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Ե., 2007, էջ 128:*

[5] *Խաչքարերի գտնվելու վայրը նկարագրվել է մինչ 2018 թ. պեղումները և դեռևս ընթացող վերականգնման և բարեկարգման աշխատանքները եղած իրավիճակով:*

95x203 սմ: Պահպանվում է նաև արդեն դասական դարձած կառուցվածքը: Դատելով եզրագոտիների և քիվի զարդանախշերից՝ խաչքարագործը առավել համարձակ և «նորարարական» լուծումներ է փորձել տալ աշխատանքին, որի դրսևորումներից մեկը քիվի մեջտեղում փոքրիկ խաչաքանդակն է: Ըստ ամենայնի, վերջին երկու խաչքարերը ևս կարող են դասվել Մաքրավանքի XIII դ. առաջին քառորդի խաչքարերի շարքին:

Նմանատիպ և նույն ժամանակահատվածի մեկ այլ խաչքար է կանգնած միանավ եկեղեցու արևելյան կողմում (նկ. 4): Սրա չափերը ավելի փոքր են, քան նախորդներինը՝ 87x183 սմ, բայց գործ ունենք բավական զարդարուն ստեղծագործության հետ: Խաչը հենված է ուղղաձիգ արմավազարդերի վրա, վերին հատվածում նռներ են: Թեև, ի տարբերություն նախորդ աշխատանքների՝ խաչի ստորին հատվածում բացակայում է վարդյակը, այդուհանդերձ այն ոճային առումով նմանություններ ունի քննարկվող շարքի խաչքարերի հետ[1]: Նման ձեռագիր ենք տեսնում նաև (խաչքարի ստորին հատվածը) Կոտայքի այլ վայրերի՝ մասնավորապես Նեղուցավանքի և Մեղրաձորի խաչքարերի օրինակներում[2]: Մեղրաձորի նշված ստեղծագործությունը թվակիր է և կրկին XIII դ. առաջին քառորդի է (1224 թ.):

XIII դ. 20-ական թթ. վերջերից Մաքրավանքում և առհասարակ Հրազդանի տարածաշրջանում վարդյակից վեր խաչակիր ձեռքերի և ըստ այդմ՝ խաչի կողքերին փոքր խաչաքանդակների պատկերումը դառնում է օրինաչափ: Այդպիսի լավագույն օրինակներից է գավթի՝ ներքուստ հարավային կողմի պատաշարում ներառված խաչքարերից մեկը (նկ. 5): Խաչքարի վերին՝ քիվի հատվածը և ստորին մի փոքրիկ հատված կոտրված են: Կողային նիստերին և դիմերեսին՝ հիմնախաչի շուրջն ու ստորին հատվածն ընդգրկող արձանագրությունից տեղեկանում ենք, որ խաչքարը 1229 թվականի է: Խաչքարի ստորին հատվածում ողջ լայնությամբ մեծ վարդյակն է: Թեև առաջին հայացքից նշմարելի են անմշակ ետնախորշը և ազատ տարածությունները, սակայն դրանք բնավ ազդեցություն չեն թողնում խաչքարի՝ մանրանկարչական ճշգրտությամբ կատարված հորինվածքային գեղեցկության վրա: Ինչպես նշվեց, խաչի հորիզոնական թևերից ներքև փոքր խաչաքանդակներ են՝ խաչակիր ձեռքերով բռնված, իսկ խաչի վերին թևերին՝ նռան և ծաղկի մոտիվների համադրությամբ խոշոր քանդակներ: Խաչքարի չափերը բավականին մեծ են՝ 110x215 սմ, իսկ միայն վարդյակի տրամագիծը՝ շուրջ 60 սմ: Խոսելով խոշորաչափ վարդյակների մասին, ինչպիսիք կան նաև վերը քննարկած շարքում (նկ. 1-3), Տ. Վարդանեսովան նշում է, որ այն հիմնականում հանդիպում է հազվադեպ և բնորոշ է երկու հարևան մարզերի՝ Կոտայք-Արագածոտնի «աշտարակյան» տիպի խաչքարերին, սակայն հանդիպում է նաև ժամանակի խոշոր հոգևոր կենտրոններ Բջնիում, Մաքրավանքում, Նեղուցավանքում[3]:

Գավթի՝ ներքուստ հարավային կողմի պատաշարին՝ 1229 թ. խաչքարի կողքին, թեքությամբ դրված մեկ այլ խաչքար կա՝ 94x134 սմ պահպանված չափերով (նկ. 6): Հյուսածո եզրագոտիներից և հիմնախաչից զատ՝ աշխատանքի վրա կրկին աչքի են ընկնում խաչակիր ձեռքերը: Ի տարբերություն քննվող ժամանակաշրջանի մյուս աշխատանքների զգալի մասի՝ խաչի ստորին հատվածում խաչքարը զարդարող այլ բաղադրիչներ (վարդյակ, ընդգծված ուղղահայաց արմավազարդեր, աստիճաններ) կարծես թե չկան[4]: Դատելով հորինվածքային լուծումներից՝ այս դեպքում ևս ըստ ամենայնի գործ ունենք XIII դ. առաջին կեսի ստեղծագործության հետ:

Պատաշարի նույն շարքում թեքությամբ դրված է նշված ժամանակաշրջանի մեկ այլ աշխատանք ևս՝ 78x155 սմ չափերով (նկ. 7): Խաչքարի հիմնախաչից վերև ընկած վերնամասը կոտրված է: Աչք են զարնում հորինվածի յուրօրինակ լուծումները. կենտրոնական խաչը հենված է ծագող ուղղահայաց արմավազարդերի վրա, որից ներքև երկու համեմատաբար փոքր խաչաքանդակներ են:

---

[1] *Խաչքարի քիվը մինչ պեղումները գտնվում էր գավթի հարավային պատի շարվածքում, որտեղից դուրս է բերվել և նախատեսվում է առաջիկայում ամրացնել խաչքարին:*

[2] *Տե՛ս Варданесова Т., Культура Хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв., նկար 200, 203:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 112:*

[4] *Խաչքարի քիվը և ստորին մասը բացակայում են:*

XII-XIV դդ. խաչքարերի անհատականացմանը զուգահեռ առաջանում են նաև գեղարվեստական դպրոցներ[1]: Մասնագիտական գրականության մեջ այդ դպրոցներից Արագածոտն-Կոտայքի խաչքարերի «հրազդանյան» տիպի աշխատանքները նշված ժամանակահատվածում բաժանվում են երկու խմբի: Առաջին խնբի խաչքարերին բնորոշ են առավել կոթողայնությունը և հնարավորինս պարզ հորինվածքները, երկրորդին՝ հարուստ կառուցվածքը, դեկորատիվ մոտիվները, և կատարողական բարձր վարպետությունը: Երկրորդ խմբի լավագույն օրինակները հայտնի են Բջնիից և Մաքրավանքից[2]:

Մաքրավանքում խաչքարագործության ուրույն դպրոցի գոյությունն ավելի ակնառու է XIII դ. կեսերից, երբ ստեղծագործությունները հետզհետե դառնում են ավելի յուրօրինակ և անհատականացված: Վարպետները գնում են այնպիսի լուծումների, որոնք կարծես թե այլևս չեն կրկնվում այլ վայրերում: Այդ շարքից են միանավ եկեղեցու դիմաց՝ բարձր պատվանդանին կողք կողքի, կանգնեցված 1259 թ. երկու խաչքարերը՝ 95x235 սմ չափերով (նկ. 8): Հորինվածքները բավական նման են. երկու դեպքում էլ արմավազարդերը պսակվում են խաչակիր ձեռքերով: Խաչի վերնամասում նռներ են (երկրորդի դեպքում դրանք կոտրված են), քիվերը փոքր-ինչ առաջ եկած են և զարդարված հյուսածո քանդակներով:

Նշված խաչքարերը յուրօրինակ են նրանով, որ իրենց վրա կրում են պատկերագրական եզակի երևույթ՝ խաչատակի աստիճանների և վարդյակի միաժամանակյա առկայություն[3]: Այս երկու խաչքարերը, կանգնեցված լինելով նույն թվականին, միևնույն պատվիրատուի պատվերով և, ըստ ամենայնի, նույն վարպետի ձեռամբ, ունենալով շարունակական արձանագրություն՝ կրում են խաչքարային հորինվածքի միմյանց բացառող երկու բաղադրիչներ՝ խաչատակի աստիճաններ և վարդյակ: Ճիշտ է, աստիճանները ձախ, իսկ վարդյակը աջ կողմի խաչքարի բաղադրիչ մասերն են, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոնշյալ նկարագրությունն էլ բավական է դրանք իբրև արվեստի մեկ ստեղծագործություն դիտարկելու համար: Հ. Պետրոսյանը, խոսելով խաչքարային հորինվածքում վարդյակի և աստիճանների մասին, նշում է, որ Գեղարքունիքում փաստված անցումային մի քանի խաչքարերում է միայն, որ վարդյակը և աստիճանաձև պատվանդանները միաժամանակ են պատկերված[4]: Սակայն վարդյակի չափերի մեծացմանը և հորինվածքում կայուն տեղ զբաղեցնելուն զուգընթաց դրանք դառնում են գրեթե իրար բացառող զարդեր և «սովորաբար, որտեղ պատկերվում է աստիճանաձև պատվանդանը, բացակայում է վարդյակը և ընդհակառակը»[5]: Խաչքարային հորինվածքում վարդյակը XII-XIV դդ. արդեն կայուն տեղ էր զբաղեցնում, իսկ վերոհիշյալ խաչքարերը հենց այդ ժամանակահատվածի են:

Ինչպես նկատեցինք, վերջին ստեղծագործություններում խաչակիր ձեռքերի առկայությունը դառնում է բնորոշ Մաքրավանքի խաչքարերին ևս: Ի տարբերություն վերը առանձնացված շարքի ստեղծագործությունների, որոնք հիմնականում հենված էին դասական պատկերագրության վրա (քիվ, խորան, վարդյակ)՝ այս դեպքում գործ ենք ունենում այլ պատկերագրության հետ: Խաչի երկու կողմերում փոքր խաչաքանդակների ի հայտ գալուն կարող էր խթանել «խաչի ինքնուրույն ծլարձակելու-բազմանալու գաղափարը»[6]: Դրանք հիմնականում խաչակիր ձեռքերի տեսքով էին արվում, որոնք, որպես կանոն, պատկերվում են այնպիսի դիրքով, որ եթե մտովի վերականգնենք խաչեր բռնող կերպարը՝ ապա այն մեզ կներկայանա երեսով դեպի խաչը դարձած և ձեռքերին խաչեր բռնած օրանտի դիրքով, ինչը լիովին համապատասխանում է խաչը երկրպագողի դիրքին[7]: Հ. Պետրոսյանը նշում է, որ եզակի դեպքերում է այն պատկերվում հակադիր

---

[1] *Խաչքարային մշակույթի դպրոցների մասին առավել մանրամասն տե՛ս Варданесова Т., К вопросу об определении “художественной школы” в культуре хачкаров, «Հայագիտության հարցեր», 2014, № 3, էջ 126-133:*

[2] *Տե՛ս Варданесова Т., Культура Хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв., с. 115-116.*

[3] *Հոդվածի հեղինակներից Գ. Ասատրյանը քննության է ենթարկել դրանց պատկերագրական առանձնահատկությունները [տե՛ս Ասատրյան Գ., Մաքրավանքի՝ 1259 թվականի երկու խաչքարերի հորինվածքային առանձնահատկությունները, «Գիտական Արցախ», № 2(5), 2020 (հոդվածը գտնվում է հրատարակման ընթացքում], որոնց այստեղ անդրադարձ չկա:*

[4] *Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, էջ 279:*

[5] *Նույն տեղում:*

[6] *Նույն տեղում, էջ 291:*

[7] *Տե՛ս նույն տեղում:*

տեսքով, ինչպես, օրինակ, Ջրաշենի XIII-XIV դդ. մի խաչքարում[1], իսկ ահա Մաքրավանքի նշված բոլոր օրինակներում վերը նշված՝ երեսով դեպի խաչը դարձած դիրքով է:

Այսպիսով, քննարկված ստեղծագործությունների զգալի մասը, մասնավորապես ամբողջ երկայնքով մեծ վարդյակ կրող խաչքարերը, իրենց կառուցվածքային հիմնական առանձնահատկություններով հստակորեն դասվում են «հրազդանյան» տիպի խաչքարերի երկրորդ խմբին: Այդ բնութագրումը, ինչպես նշում է Տ. Վարդանեսովան, չի հանդիպում խաչքարերի «հրազդանյան» տիպի խաչքարերի մեծ մասի դեպքում, և հնարավոր է որոշակի ազդեցություն ունենա Արագածոտնի ոճից: Սրանք, ի տարբերություն առաջին շարքի խաչքարերի, հիմնականում ունեն թվակիր արձանագրություն:

ՄԱՔՐԱՎԱՆՔԻ XII-XIV ԴԴ. ՆՈՐԱՀԱՅՏ ԽԱՉՔԱՐԵՐԸ

2018 թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ Ավետիս Գրիգորյան) իրականացվող վերականգնման և բարեկարգման աշխատանքներին նախընթաց պեղումներ կատարեց Մաքրավանքի համալիրում: Պեղման-մաքրման հիմնական աշխատանքներ կատարվեցին գավթի ներսույթում, զույգ եկեղեցիների և գավթի շրջակայքում: Բազմաթիվ հնագիտական գտածոների շարքում հայտնաբերվեցին նաև տարբեր դարերով թվագրվող տասնյակ տապանաքարեր և խաչքարեր:

Նորահայտ խաչքարերը ժամանակագրական առումով ընդգրկում են X-XVII դարերը: Դրանցից IX-XI դդ. շուրջ մեկ տասնյակից ավելի աշխատանքներ փորձել ենք դասակարգել՝ ըստ ոճական և պատկերագրական առանձնահատկությունների[2]: Ի տարբերություն դրանց՝ XII-XIV դդ. նորահայտ ամբողջական խաչքարերը ընդամենը մի քանիսն են, որոնք ներկայացնում ենք ստորև.

Առաջինը գավթի արևմտյան կողմից հայտնաբերված 1219 թ. արձանագիր խաչքարն է (նկ. 9): Ունի 68x137 սմ չափեր, մոխրագույն բազալտից է: Սա XII-XIV դդ. նորահայտ այն քիչ ստեղծագործություններից է, որ լիարժեք ամբողջական է: Խաչքարի եզրագոտիները և քիվը հյուսածո են: Կենտրոնական խաչի թևերից դեպի վեր ևս երկու փոքր խաչեր են: Խաչքարագործ վարպետը հետաքրքիր լուծում է մշակել խաչքարի ստորին հատվածի համար. խաչը հենված է աստիճանների վրա, որից ծագում են արմավազարդերը:

Թվակիր արձանագրությամբ երկրորդ նորահայտ խաչքարը, որ գտնվել է նախորդի մոտ, ունի 80x150 սմ չափեր (նկ. 10): 1224 թ. այս աշխատանքը ևս մոխրագույն բազալտից է, ստորին մասը կոտրված: Սա Մաքրավանքի՝ նշված ժամանակահատվածի այն սակավ նմուշներից է, որ ստորին հատվածում չի ավարտվում հորինվածքի որևէ ընդգծված բաղադրիչով և միայն խաչակիր ձեռքեր են: Այդ, զարդարուն քիվի և եզրագոտու, հիմնախաչի և խաչաքանդակների թևերի ավարտի ու ձեռագրային մյուս նմանությունները հիշեցնում են Մաքրավանքի երկու այլ ստեղծագործություն (նկ. 4, նկ. 6): Նշված հանգամանքը ևս մեզ հուշել է այդ աշխատանքները (նկ. 4, նկ. 6) թվագրելու XIII դ. առաջին քառորդով:

Խաչքարային արվեստի ծաղկման շրջափուլի բարձրակետը Մաքրավանքում հորինվածքային առումով հասնում է մի ստեղծագործությամբ, որի նման երկրորդը ոչ միայն նորահայտ, այլև մինչ պեղումները եղած խաչքարերի շարքում դժվար է գտնել: Այն գտնվել է գավթում և դրանից արևմուտք՝ քառատված վիճակում (նկ. 11)[3]: Խաչքարն ամբողջությամբ հյուսածո է, անգամ ետնախորշում ազատ տարածություններ չկան: Միանգամից աչք են զարնում բուսաերկրաչափական հյուսածո դեկորները: Խաչքարն ունի դասական կառուցվածք՝ քիվ, խորան, վարդյակ: Հսկայական են ստեղծագործության չափերը՝ 112x278 սմ: Քանի որ այս խաչքարի հորինվածքային լուծումները գրեթե եզակի են Մաքրավանքում, իսկ արձանագրական կամ այլ տվյալներ նրա մասին բացակայում են, կարծում ենք, որ դժվար է հիմնավորել վերջինիս՝ տեղական դպրոցին պատկանելու հանգամանքը: Նմանօրինակ ստեղծագործությունների դեպքում, ինչպես

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 291-292:*

[2] *Առավել մանրամասն տե՛ս Գրիգորյան Ա., Ասատրյան Գ., նշվ. հոդված:*

[3] *Վերակազմության համար շնորհակալություն ենք հայտնում ճարտարապետ Արտակ Ղուլյանին:*

նշում է Հ. Պետրոսյանը, ավելի տեղին է խոսել դրանց համահայկական բնույթի մասին, երբ հանրաճանաչ վարպետների ստեղծագործությունները հայտնվում էին երկրի տարբեր կողմերում, դառնում ընդօրինակման առարկա[1]:

Մաքրավանքի XII-XIV դդ. նորահայտ խաչքարերի շարքում կան բեկորներ, որոնց միայն այդ հատվածի հորինվածքային լուծումներից անգամ ենթադրելի է նշված դարաշրջանին համապատասխանելը (նկ. 12): Ցավոք, կան նաև բեկորներ, որոնց մի մասի պարագայում դժվար է խոսել ստեղծման ժամանակաշրջանի մասին:

Ամբողջացնելով Մաքրավանքի՝ նշված ժամանակահատվածի նորահայտ ստեղծագործությունների մասին պատկերացումները՝ կարող ենք եզրակացնել, որ դրանք բոլորովին նոր լույս են սփռում Մաքրավանքի խաչքարային արվեստի վրա: Թեև որոշակի ընդհանրությանը, որ բնորոշ է XII-XIV դդ. Մաքրավանքի ստեղծագործություններին, նրանք Մաքրավանքի խաչքարերի շարքում բերեցին նաև պատկերագրական և հորինվածքային նորություններ, ինչպիսիներից է, օրինակ, խաչատակի աստիճանների պատկերումը XIII դ. (նկ. 9), ինչը դեռ կարիք ունի հետագա մանրակրկիտ ուսումնասիրության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մաքրավանքի XII-XIV դդ. խաչքարերի շարքում գերակշիռ են համալիրի գլխավոր եկեղեցու կառուցման շրջանի՝ XIII դ. ստեղծագործությունները: Քննարկված խաչքարերը հորինվածքային հարուստ կառուցվածքով և դեկորատիվ մոտիվներով հիմնականում դասվում են Կոտայք-Արագածոտնի դպրոցի «հրազդանյան» տիպի խաչքարերի երկրորդ խմբին: Դրանց մի մասը դասական պատկերագրությամբ (քիվ, խորան, վարդյակ) XIII դ. առաջին քառորդով թվագրվող օրինակներ են, իսկ մյուսներին բնորոշ են հորինվածքային առավել համարձակ լուծումները, խաչակիր ձեռքերի պատկերումը, շատ դեպքերում բավականին մեծ վարդյակը և հիմնականում թվագրվում են XIII դ. 20-ականների կեսերից մինչև 50-ականները:

Չնայած ձևերի տեսանելի բազմազանությանը, աշխատանքում փորձեցինք վեր հանել Մաքրավանքի XII-XIV դդ. խաչքարերի ողջ բազմազանությունը, որոշակի դասակարգում մտցնել դրանց շարքում՝ ցույց տալով, որ խաչքարային արվեստի ծաղկման ժամանակահատվածին բնորոշ գրեթե ողջ ազդեցությունը տարածվել է նաև Մաքրավանքի խաչքարային մշակույթում՝ իր բոլոր օրինաչափություններով և առանձնահատկություններով:

Гегам Асатрян, Аветис Григорян, ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.). На территории комплекса Макраванк в городе Раздан Котайкской области имеются многочисленные хачкары IX-XVII веков, известные ранее и обнаруженные в результате раскопок. В статье представлены хачкары периода расцвета хачкарского искусства XII-XIV вв., среди которых преобладают произведения XIII века периода строительства кафедральной церкви комплекса.

Хачкары XII-XIV вв. Макраванка относятся ко второй группе хачкаров «разданского» типа Котайк-Арагацотнской школы, имеют классическую иконографию, или более смелые вымышленные решения в изображении руки крестоносцев и большой розетки.

Хачкары XII-XIV вв. несут на себе отпечаток цветущего периода Макраванка и являются важными документами его истории.

Ключевые слова*: Макраванк, хачкары XII-XIV вв., иконография, школы мастеров хачкара, раскопки, нововыявленные произведения.*

Gegham Asatryan, Avetis Grigoryan, THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES). On the territory of Makravank complex located in Hrazdan city of Kotayk region, there are numerous crosstones of the IX-XVII centuries, previously known and discovered as

[1] *Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքարը. ծագումը, էջ 133:*

a result of excavations. The article presents the crosstones of XII-XIV centuries, the flowering period of the crosstones art, among which the works of the XIII century, the period of construction of the cathedral church of the complex predominate.

Crosstones of the XII-XIV centuries of Makravank belong to the second group of "Hrazdan" type of the Kotayk-Aragatsotn school, they have classical iconography, or bolder fictional solutions: image of the crusader hands and a large rose ornament.

Crosstones of the XII-XIV centuries bear the stamp of the flourishing period of Makravank and are important documents of its history.

Key words: *Makravank, crosstones of XII-XIV centuries, iconography, schools of crosstone makers, excavations, newly discovered creations.*

Նկար 1. 1221 թ.

Նկար 2. XIII դ. առաջին քառորդ

Նկար 3. XIII դ. առաջին քառորդ

Նկար 4. XIII դ. առաջին քառորդ

Նկար 5. 1229 թ.

Նկար 6. XIII դ.

Նկար 7. XIII դ.

նկար 8. 1259 թ.

նկար 9. 1219 թ.

նկար 10. 1224 թ.

նկար 11



նկար 12, XIII դ.